# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 38 Ա

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԱՐՏԱԿ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 -րդ կետով , 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46 -րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Համայնքի 2020 թվականի բյուջեի 09.2.1.51 / ընդհանուր հիմնական կրթություն/ ծրագիր 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից Լեռնանիստի Ս.Նազարյանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի շրջանավարտներին տալ դրամական օգնություն 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 20 թ. մայիսի 22
գ.Լեռնանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 39-Ա

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 5-ի N 55-Ա որոշումը և Լեռնանիստ համայնքի դրամական օգնություն տրամադրող հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 22-ի թիվ 5 արձանագրությունը

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1. Ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին տրամադրել դրամական օգնություն , համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2020 թ. մայիսի 23
գ.Լեռնանիստ

Հավելված 1
Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի
2020 թվականի մայիսի 23 -ի N 39-Ա որոշման

| նո | Անուն, ազգանուն, հայրանուն | Հասցեն | Գումարի չափը /հհ դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Հարությունյան Աստղիկ Հայրազատի | Գ. Լեռնանիստ | 15.000 դրամ |
| 2. | Սահակյան Արսեն Ռազմիկի | Գ. Լեռնանիստ | 20.000 դրամ |
| 3. | Խաչատրյան Համասփյուռ Վլադիկի | Գ. Լեռնանիստ | 10.000 դրամ |
| 4. | Հարությունյան Սուսաննա Մկրտչի | Գ. Լեռնանիստ | 10.000 դրամ |
| 5. | Հարությունյան Ալբերտ Գրիշայի | Գ. Լեռնանիստ | 10.000 դրամ |

Ընդամենը՝ 65.000 / վաթսունհինգ հազար/ դրամ

Լեռնանիստ համայնքի ղեկավար՝ Ա.Հայրապետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N40 -Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի 146-րդ և 147-րդ կետերի

***Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝***

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի վարչական տարածքում սուբվենցիոն ծրագրով իրականացված, ավարտված շինարարական օբյեկտի՝ խմելու-կենցաղային նպատակով 1/մեկ/ խորքային հորատանցքի հորատման ավարտված շինարարական օբյեկտը շահագործման հանձնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) հանձնաժողովի նախագահ - Արտակ Ադամյան -համայնքի ղեկավարի տեղակալ

2) հանձնաժողովի անդամ- , Հովհաննես Մարգարյան- Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

3) հանձնաժողովի անդամ - Հովիկ Միրզախանյան- «Արտեզիա» ՍՊԸ տնօրեն

4) հանձնաժողովի անդամ- Արման Թորոսյան- ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքներով գործունեության բաժնի պետ

5) հանձնաժողովի անդամ - Արթուր Գրիգորյան - ՀՀ Քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Կոտայքի տարածքային բաժնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության գլխավոր մասնագետ

6) հանձնաժողովի անդամ- Տարոն Վիրաբյան - «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ տնօրեն

7) հանձնաժողովի անդամ - Վալերի Ղազարյան- «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ հիդրոտեխնիկ

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2020 թ. մայիսի 25
գ.Լեռնանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 41 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՇՄԱՎՈՆ ՌՈՒԲԵՆԻ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «բ» ենթակետով, 34-րդ, 48-րդ և 51-րդ կետերով և հիմք ընդունելով Շմավոն Բարեղամյանի 2020 թվականի հունիսի 1-ի դիմումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

**1.** Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում գտնվող Շմավոն Ռուբենի Բարեղամյանին սեփականության իրավունքով պատկանող Լեռնանիստ համայնքի 13-րդ փողոց թիվ 3 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.202 հա մակերեսով /սեփ. վկայական N 04052020-07-0024/ և Լեռնանիստ համայնքի 13-րդ փողոց թիվ 5 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.1956 հա մակերեսով /սեփ. վկայական N 04052020 - 07-0065/ հողամասերը միավորել համաձայն իր դիմումի և միավորված 0,3976 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 13-րդ փողոց թիվ 3, 5:

**2.** Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2020 թ. հունիսի 1
գ.Լեռնանիստ